— Այստեղ հաւաքուած են բոլոր գրչագրերը:

Կահաւորութիւնը նոյնն էր, ինչպէս առաջին սենեակում. մէջտեղում կանաչ մահուդով ծածկած սեղան, շուրջանակի՝ փայտեայ մեծ պահարաններ, եւ ապակիների ետեւից երեւում էին մեր բազմաշխատ նախնեաց մագաղաթեայ վաստակները: Սենեակի ճակատին, ոսկեայ շրջանակի մէջ, քարշ էին ընկած Սահակ Պարթեւի եւ Մեսրոպի պատկերները, որոնք տոեցին հայերին գիր եւ դպրութիւն մայրենի լեզուով:

Ես ցաւելով մտաբերեցի Կտուց անապատի եկեղեցու մթին եւ խոնաւ աւանդատունը, որի մէջ փոշու տակ ծածկուած եւ մի անկիւնում յատակի վրայ թափուած գտանք ամենահազուագիւտ օրինակները նախնի մատենագրութեան:

Ի՞նչ համեմատութիւն այնտեղ եւ այստեղ...

— Գրքերի ցուցակ ունէ՞ք, Հայրիկ, — հարցրեց Ասլանը:

— Ունենք, — պատասխանեց նա, դուրս բերելով մի գիրք, որ պահուած էր պահարաններից մէկում: — Մենք դեռ չենք տպում այդ ցուցակը, որովհետեւ աշխատում ենք հետզհետէ աւելացնել գրչագրերի թիւը:

Ասլանը նստեց գրասեղանի մօտ, սկսեց թերթել ցուցակը:

— Դարձեալ բաւական գրչագրեր ունէք, — ասաց նա: — Դուք մեծ բարերարութիւն արած կը լինէք, Հայրիկ, եթէ կաշխատէք այս կողմերի բոլոր վանքերից ազատել գրչագրերը եւ այստեղ հաւաքել: — Եւ նա պատմեց թէ իր այցելութեան ժամանակ Կտուց անապատը ինչ ցաւալի դրութեան մէջ գտաւ այդ վանքի գրքերը:

— Բոլոր վանքերում միեւնոյնը կը տեսնէք, — պատասխանեց Հայրիկը: — Բայց եթէ գիտենայիք, թէ որքա՞ն դժուարութիւնների, որքա՞ն անախորժութիւնների եմ հանդիպել, մինչեւ կարողացել եմ հաւաքել այդ գրքերը: Մեր վանահայրերը աւելի շուտով յօժարւում են, որ իրանց վանքերում գտնուած գրքերը անխնամ դրութեան մէջ փտեն, ոչնչանան, քան թէ տան, որ մի ապահով տեղում պահեն: Իսկ ռամիկ ժողովուրդը բոլորովին այլ կերպով է վարւում. նա իր ձեռքն ընկած գրչագիրը տանում է եւ մեծ երկիւղածութեամբ թաղում է հողի տակ, ինչպէս թաղում է նա իր սիրելի որդուն:

Ասլանը շարունակում էր թերթել ցուցակը:

— Այդ անում են եւ եկեղեցականները, — ասաց նա, — ես լսել եմ, թէ ինչպէս մի վանքում կատարել էին մի հանդիսաւոր թաղում բոլոր ցեցակեր գրքերի: